ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1536-Ա « 09 » նոյեմբերի 2026թ.

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, ՀՀ ֆինանսների նախարարի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի N 270-Ն հրամանով հաստատված Հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկի 184-րդ կետի և Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 5209-Ա որոշման N 2 հավելվածի 18-րդ կետը՝

1. «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել 2024-2026թթ. համակարգի գնահատման աուդիտ՝ 2026 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 11-ը ներառյալ:

2. Աուդիտորական խմբի ղեկավար նշանակել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ՝ Սեյրան Թունյանին:

3. Աուդիտորական խմբի անդամներ նշանակել՝ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Արմինե Շահբազյանին և գլխավոր մասնագետների ժ/պ՝ Նելլի Զաքարյանին և Լուսինե Դանիելյանին:

4. «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ սահմանված կարգով ապահովել աուդիտորական խմբի անդամների անարգել մուտքն ընկերության տարածք, աջակցել աշխատանքներին և պահանջվող ժամկետներում տրամադրել աուդիտի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, տեղեկատվությունն ու բացատրությունները:

5. Աուդիտորական խմբի ղեկավարին՝ սահմանված կարգով ներկայացնել աուդիտորական հաշվետվություն:

6. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ